ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

ք. Վաղարշապատ 22 Օգոստոս 2025թ.

«Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ասոցիացիա), ի դեմս նախագահ Միրա Անտոնյանի և Վաղարշապատի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանի (այսուհետ Կողմեր), կնքեցին սույն Համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. Հուշագրի առարկան.

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են ջանքերի և ռեսուրսների համատեղման սկզբունքով Վաղարշապատ համայնքում հիմնել Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն (Սոցիալական աշխատանքի կենտրոն), որի գործունեությունը կկազմակերպվի Ասոցիացիայի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Հոդված 2. Համագործակցության նպատակները.

2.1. Վաղարշապատ համայնքում «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ համատեղ ստեղծել Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն (Սոցիալական աշխատանքի կենտրոն), որի նպատակն է՝

2.1.1. Սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցում՝ տեղահանված և տեղաբնակ ընտանիքների համար, կատարել կարիքի գնահատում, հոգեբանական խմբային և անհատական աշխատանքներ, սոցիալական դեպքի վարում, միջոցառումների կազմակերպում, սոցիալականացմանն ուղղված խմբային և

անհատական աշխատանքներ, հատուկ մասնագետի, այն է, արտթերապևտի, լոգոպեդի և պարաթերապևտի ծառայությունների մատուցում:

2.1.2. Վաղարշապատ համայնքում Ասոցացիայի հետ համատեղ Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն ստեղծելու համար Վաղարշապատի համայնքապետարանը կտրամադրի տարածք՝ վերը նշված ծառայությունները իրականացնելու համար:

«Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ Նախագահ՝ Միրա Անտոնյան	**Վաղարշապատի համայնքապետարան Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Արգիշտի Մեխակյան**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծարավ Աղբյուր 55/5, բն. 283 Հեռ.՝ +374 60 540 150	Հասցե՝ Ք. Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոց 0 Հեռ՝՝ +374-231-53663/224/301/121